

Գրութառքները բոլոր յերկրների, միացնե

Հ. Ա. Խ. ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ Ժ. Տ. Գ. Խ.

ՀԵՌԱՎԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ

ՀԵՌԱՎԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԻՆԴՈՒՍՏՐԻ ԱԼ ՏԵԽՆԻԿՈՒՄ

Կազմեց՝ Ա. Տեր Արանձայան

Խմբ. Ա. Մովսեսյան

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ և 4

54 (07) 4

4.-26

ՔԻՄԻԱ

ՊՐԱԿ IV

ԺԵՐԱՐԴ ԿՈՆԳԵՆԻՐ

4152

15480

54(07)

S-37

2002

ԱՌԱՋՎՈՒԹՅՈՒՆ № 4

Ժամանակակից մարդու ամբողջ կյանքը, ամբողջ տեխնիկան և արդյունաբերությունը սերտ կերպով կաղված են ններդիայի աղբյուրների հետ:

Եներդիայի աղբյուրներ հանդիսանում են՝ քամու ուժը, վորով շարժվում են հողմաղացները և այլ մեռանները. բարձր տեղից թափող ջրի ուժը, վորով շարժվում են ջրաղացներ, աշխատում են հիղրուելեկո արոկայաններ և այլն. ջերմությունը, վոր սանցվում է զանազան վառելանյութերի այրումից (փայտ, քարածուխ, նաևթ և այլն) և վորի եներդիայով են աշխատում բաղմաթիվ մեքենաներ, ավտոմոբիլներ, այեռովաններ և այլն:

Վառելանյութերի նշանակությունը, վորպես եներդիայի աղբյուր, չափաղանց մեծ և, այդ և պատճառը, վոր 4-րդ առաջադրությունը վառելանյութերի ուսումնասիրությանն ենք հատկացնում:

Այս առաջադրությամբ նաև մենք ծանոթանալու յենք վառելանյութերի տեսակներին, նրանց առաջացած ման պայմաններին և մշակման յեղանակներին: Ապա կիմանանք, թե վառելանյութերի ինչպիսի սկաշարներ կան աշխարհում ընդհանրապես և ԿՍՀՄ մասնավորապես: Հետո կուսումնասիրենք վառելանյութերի անհրաժեշտ բաղադրիչ մասը կազմող ածխածին նյութը, նրա տեսակները, ինչպես և ածխածնի այրումից առաջացած

Վառելանյութ
Դաշտական 6645 (ր)
Պատվոր 3836
Տրամ 500

2010


ածիսածնի ոքսիդը, ածիսածին դէփօքսիդը, և նրանց ոզտագործումը:

Վերջում կալարղաբանենք այրում հասկացողությունը և կիմանանք, թե ինչ նյութեր են առաջնանում այրումից:

Տեխնիկայում գործ են ածում դիմավորապես հետեւյալ վառելանյութերը—փայտ, ածուի, նավթ, տորֆ: Աշխատենք մոտիկից ծանոթանալ այդ վառեւանյութերին՝ առանձին—առանձին:

ՓԱՅՏԱԺՈՒԽ

Հայոնի յե, վոր փայտածուխը սուանում են փայտից: Այդ նպատակի համար նախ և առաջ գետնի մեջ մեծ փոսեր են փորում, ապա փայտի կտորները վորոշ կարգով դառավորում այդ փոսի մեջ: Փայտները վերե-



Նկ. 1. Փայտածուխի պատրաստումը,
Խիժային նյութերը հավաքելու համար փայտի դեղի տակ
շինված և հարմարություն

վից ծածկում են հողով կամ կավով, թողնելով այստեղ 2 փոքրիկ անցքեր և տակից վառում են:

Եերբ փայտի կույտն սկսում է այրվել, վերևի անցքերը փակում են և թողնում են, վոր հետագա այրժան գործողությունը կատարվի առանց ողի մտնակացության: Այդ յեղանակով փայտը գանդաղ այրվելով ոծիքանում ե, այսինքն դառնում ե ածուի, իսկ փայտի

մեջ յեղութ խեժային նյութերը հավաքվում են փոսի
մեջ։ Փայտածուխի ստացման յեղանակներից մեկի
տեսքը պատկերացրած ե նկար 1-ում։

Փայտն ածխանում ե և այն ժամանակ, յերբ նա
ընկնում ե ջրի մեջ, բայց այսուղ ածխացման պրո-
ցեսը դանդաղ է կատարվում։

Տեսած կլինեք, թե ջրի մեջ ընկած փայտի կտոր-
ները կամ գերանը ինչպես ե սեանում։ Այս հանդաման-
քը դալիս է մեզ տօնելու, վոր ջրի մեջ նույնպես այրում
է կատարվում։ Վորքան յերկար մնա փայտը ջրի մեջ,
այնքան նա ավելի շատ կածխանա։

Արհեստական յեանակով՝ ածուխ պատրաս-
տելը արհեստական ածխացում է կոչվում, իսկ յերբ
փայտն ածխանում և ջրի մեջ, կամ գետնի տակ, ողի
բացակայությամբ՝ կոչվում ե բնական ածխացում։

Բնական ածխացումը կատարվում է հսկայական
չափերով բնության մեջ, յերբ զանազան բուսականու-
թյուն և ամրող անտառներ ջրի կամ գետնի տակն ե
ընկնում։ Այդպիսի ածխացման արդյունք են տորֆը
և քարածուխը։

ՏՈՐՖԸ ՅԵՎ ՄՐՍ. ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ամենքդ ել տեսած կլինեք ճահիճ, բայց այնպի-
սին, վոր ծածկված լինի՝ մամուռներով, ճահճային
խոտերով և թփուտներով, յերեվի քչերու եք տեսել։
Այդպիսի ճահիճները բույսերի համար գերեզմանոց
են հանդիսանում։ Ճահճի յերեսը ծածկող մամուռների,
խոտերի և թփուտների արմատներն ու ճյուղները հյուս-
վելով իրար հետ՝ թաղիքի նման շերտ-շերտ նստում
են իրար վրա և հետո պոկվելով մայր բույսերից ընկ-
նեամ են ջրի վրա։ Մի առ ժամանակ ջրի յերեսին լր-

զալուց չետո, թացանում և սովորվում են ջրի տակ։
Ճարիճների ընթացքում այդ նյութեր իրար վրա դարձ-
վելով շերտեր են կազմում և ջրի մեջ աստիճանաբար
ածխանալով՝ դառնում ե այն վառելանյութը, վար
տորֆ և կոչվում։

Անցնում են յերկար տարիներ, ճահիճները չորա-
նում են և այդ վայրը դառնում է տորֆավայր։

Տորֆը գորչ կարմրագույն բուսական մի զանգ-
ված և կազմված բուսական բարակ թելիկներից։ Տոր-
ֆը շատ հեշտությամբ այրվում է, բայց այրվելիս
շատ մոխիր է թողնում, ինչպես աթարը։ Չսայած դը-
րան, տորֆը լավ վառելանյութ է հանդիսանում։ Այդ
է պատճառը, վոր թե արտասահմանում և թե ԽՍՀՄ
մշակման են յենթարկում հսկայական սարածությամբ
տորֆավայրեր։ Բահերով կամ այլ գործիքներով կը-
տրըտելով տորֆը՝ զարսում են իրար վրա, չորաց-
նում և տեղափոխում ուր հարկն է։ Յերբեմն տորֆի
կտորները մանրացնում են, ջրի հետ խառնում և ըս-
տացած զանգվածը հասուկ մեջենաներով ճնշելով
ստանում են տորֆի ամուր աղյուսներ կամ, ինչպես
ասում են բրիկեսներ։

Տորֆի շերտերը տեղ-տեղ բավականին հաստ նն
լինում և հասնում են մինչև 12 մետր հաստության,
և իրար վրա զարսվելով ճնշում են տակի շերտերը.
ստացվում ե ավելի խիտ մի զանգված, վորը կոչվում
է գոլշածու։ Վերջինս ավելի լավ վառելանյութ է,
քան տորֆը։

ԳՈՐԾՎՈՒԽ, ՍՐԱ ԴՈՑԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

Քարածուխը գոյացել է շատ հին ժամանակներում, յերբ ցամաքն ու ծովը յերբեմն տեղափոխություններ են կատարել:

Եերեվակայեցեք մի հսկոյական անտառ, վոր շատ մեծ տարածություն և բռնում, հանկարծակի ծովի տակն և իջնում, իսկ ծովի փոխարեն հսկայական բարձրունքներ ու լեռներ են դոյանում, վորոնք իրենց հերթին ծածկվում են անտառով: Այսպիսի յերեվույթներ յերկրագնդի կյանքի ընթացքում շատ անգամ են կատարվել:


Ծովի տակն իջած անտառները ջրի մեջ սկսում են ածխանալ: Ծովի ջրի մեջ գետերի բերած տիզմն ու ավաղը գալիս ծածկում են նրանց և վերջիվերջո իրենց տակը թաղում:

Այդ պրոցեսը չարունակվում է տասնյակ հազարակոր տարիներ: Մի կողմից ծովի ջրի հսկա ծանրությունը, մյուս կողմից տիզմի, ավաղի և հողաշերտերի ծանրությունն այնպիսի հսկայական ճնշում են առաջնում, վորի տակ ածխացած անտառը սեղմվում և դառնում է քարածուխ:

Հատուշատ տարիներից հետո ծովը նորից ցամաք և դառնում, իսկ ցամաքը ծով: Նորից անտառներ են գոյանում: անցնում են հարյուր հազարավոր տարիներ և գարձյալ գալիս ե ծովի տիբազետությունը և այսպիս չարունակ: Արդեն մեկ անգամ գոյացած քարածի չերտի վրա ավելանում ե ուրիշը, յերկրորդի վրա յիրորդը և այլն: Այդ չերտերի արանքում դանվում են ավաղի, կապի, կրաքարի և այլ լեռնային փեսակների

չերտեր: Չորք նկարում պառկերացրած և անտառի աեսքը, վորից գոյացել ե քարածուխ:

Քարածուխն ունի զանազան տեսակներ: Ամենալորդ տեսակը կոչվում է անտրացիո: Բավականին ծանրը, միանդամայն սև գույնի և փայլ ունեցող նյութն է: վառվում և գժվարությամբ, բայց տալիս և ուժեղ տառավորություն: Անտրացիո հին քարածուխ է, նրա մեջ



Նկ. 2. Անտառ, վորից պատահել ե քարածուխը

այրման գործողությունը շատ և առաջ զնացել: Նրանից ավելի նոր և սովորական քարածուխը, վոր նույնական մեջ սև գույն ունի, բայց առանց փայլի: Սա թեպետ տվելի հեշտությամբ և վառվում քան անտրացիաը, բայց առաջ և բերում ավելի քիչ տաքություն, վորով հետև ածխացումը (այրումը) նրա մեջ ավելի քիչ չափով և կատարված: Արտաքին ակաքից բոլորովին չէ

Նկատվում, վոր ածուխը բռւսական ծաղութ ունի,
բայց յերբ դիտում են մանրադիտակով (միկրոսկոպ)
նրա մեջ բռւսական հետքեր են (յերբեմն ել չափ պարզ
ձեվով) նկատվում։ Այդուհի հետքերից մեկը ցույց է
տրված 3-րդ նկարում։


Քարածությը դետնի տակ չափ խորհն և դժոնվում և
նրա շերտերը չափ հաստ չեն՝ 2-3 մետրից վեց ավելի:



Նկ. 3. Տերեւ ինտոք քարածխի վրա

Գարածուխ ստանալու համար նախ փորում են խորք
հորեր, վորոնք կոչվում են շախտիք: Ածուխը քանդում
են կամ ձեռքով՝ մուրճերի և բրիչների միջոցով, կամ
առանձին բրիչներով՝ ճնշված ողի և ելեկտրականու-
թյան միջոցով: Մուրճերի և բրիչերի հարգածների
տակ ածուխի խոշոր կառոները փշում են ավելի մանր
կտորների և հետո դարսում են սայլակների վրա և տա-
նում մինչև պլաստիկ շախտը, վորտեղից առանձին վե-
րելակ՝ մեքենաների միջոցով բարձրացնում են գետնի
յերեսը:

Վերջացնելով մեկ շերտը՝ անցում են մյուս շերտին և այդպես շարունակ։ Ժամանակի ընթացքում գետնի առաջանում են բաղմաթիվ անչքեր, վարոնք վորորապես ձեփով իջնում են դեպի հողի զանազան շերտերը։ Բանվորները ցած են իջնում գետնի



Հե. Տ. Աշխատանքը քարածիկ հանգում

Խորքում գտնվող աշխատավայրերը հատուկ զամբյուղների միջոցով և աշխատում են յերեմն պառկած վիճակում (նկ. 4):

Ածիսհանքերում հավաքվում ե հանքային գազ, վորն ողի հետ խառնվելով կազմում ե բռնկվող մի խառնուրդ՝ և կրակին հանդիպելիս մեծ պայթուն ե առաջանաւմ և յերբեմն մեծ աղետների պատճառ դառ-

Նհմէ : Այդ վտանգից աղաստ մնալու համար ածխաճռ-
րերում գործ են ածում առանձին տեսակի լապտեր,
վոր թույլ չի տալիս առաջացող պայթունն ողի մեջ
տարածվելու : Այդ լապտերը, նրա հնարողի անունով,
կոչվում է Գեվիթի լապտեր :

Վերջերս Դեվիթ լապտերը շատ ածխահորերում փոխարինված է եղեկուրական լուսավորությամբ:

ԱՍՀՄ քարածխի հարուստ հանքերը գտնվում են
Դոնի լըջանում, Ուրալում և Վրաստանում:

ՔԱՐԱԾԵԼ ԶՈՐ ԹԱՐԱԿՄԵ


Աշխատանք. Սարքեցեք նկար 5-ի մեջ ցույց տված
զործեքը (կարող եք այլ կերպ սարքել): Ա. փորձանոթի
մեջն ածեք քարածխի կտորներ և ուժեղ կերպով տա-
քացրեք (ավելի լավ ե Ա. փորձանոթը լինի զժվարահալ
աղակուց): Մի քանի րոպե տաքացնելուց հետո Բ.
փորձանոթի մեջ կհավաքի գորշագույն հեղուկ, իսկ
Գ. խողովակով դռւրս կդա գաղ: Վառեք այդ գաղը.
Ի՞նչ բացով ե այրվում: Վառվող այդ գաղը կոչվում ե
լուսագաղ: Հոտ քաշեք Բ. փորձանոթի հատակում գո-
յացած հեղուկից: Ի՞նչ հոտ եք առնում:

Ա. փորձանոթի մեջ մնացած ածուխը ավելի յէ խը-
տանում և այդպիսի խտացած ածուխը կռչվում է
կուկու:

Կոկաը մհծ չափերով գործադրում են հանգերից
մետաղներ ստանալու համար. գոյություն ունեն հա-
տուկ գործարաններ, վրոնք հատկապես կոկս են
պատրաստում:

Քարածխի չոր թորման ժամանակ գոյացած հեղուկ նյութը իր մեջ պարունակում ե անուշադրի վոր

(в а ш а т ы р а в ы й спирт), а л ь б ե , ф а с ա խ տ թ բ ը
թ ու , ф ա ր ա ծ խ ս ա յ ի ն ն յ ու թ ։ Վ ե ր ջ ի ն ն յ ու թ ի ւ ր հ ե ր թ ի ն
չ ո ր թ ո ր մ ա ն յ ե ն թ ա բ կ ի լ ո ս ա ն ո ւ մ ե ն մ ի շ ա բ ք ա ր ժ ե ս
գ ա վ ո ր ն յ ու թ ե ր , ի ն չ ո լ ե ս ո ր ի ն ա կ , բ ե ն դ ո ւ , կ ա ր ր ո ւ մ ա ն



Նկ. 5. Քարածիխ ցամոք թորումբ։
Ա) Քարածիխ կտորները պարունա-
կաղ փորձանոթբ, Բ) Ենթակրող
փոքրանոթը, Գ) վասպաղ դեկո-
րատիվը

թթու, նախտալին և այլն։ Այս վերջին նյութերից
քիմիական մի շարք բարդ ռեակցիաների միջոցով
սպանում են բազմաթիվ այլ նյութեր— զանազան ներ-

կանյութեր, գեղանյութեր, պայմանը և թունավորող նյութեր; Քարածխից են ստանում նաև զանազան անուշահոտ նյութեր:

Քարածխի չոր թորումը տեխնիկայում շտու մեծ շափերով և կատարվում: Քարածխից ստուցած լուսազաղը զործադրվում և փողոցներ և տներ լուսավորելու համար (որինակ Մուկվայում) և փորակն վառելիք:

ՆԱՎԹ, ՍՐԸ. ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԳՈՅԱՑՈՒՄԸ


Նավթն ամեն տեղ չի գտնվում: Նա զվարավորապես գտնվում և կովկասում՝ Բագու և Գրողնի քաղաքների մոտ: Վերջերս նավթ հայտնաբերվել և նաև Ուրալում: Նավթ կա Ամերիկայի Պենսիլվանիա նահանգում, Մեկոսիկայում, Ռուսինիայում և մի քանի այլ վայրերում:

Նավթը գետնի տակից դուրս են հանում զանազան նում նավթի մշակման սկիզբը 1872 թիվն և համարվում:

Նավթը սկսել են մշակել 1855 թվից, Ռուսաստանակներով: Ամենատարածված յեղանակը դա նախթահորերի միջոցով նավթ հանելն է: Նավթահորերն ունենում են 100-1000 մետր խորություն՝ նայած նավթի շերտի խորության: Յերբ փորում հասնում են նավթի շերտին, յերբեմն նրա մեջ հավաքված դադերի և ջրային գոլարշիների ճնշման աղղեցությունից նավթը շատրվան և խփում գետնի յմբեսից տասնյակ մետր բարձրությամբ: Այդպիսի շատրվաններ յերբեմն զործում են որերով, շաբաթներով, ամիսներով և որական հարյուրավոր տոնն նավթ են արտադրում:

Հորը փորելուց առաջ այդ տեղում տախտակից շինում են բարձր վիշկաներ: Բաղվի նավթարդյունա-

թբական վայրերում այդպիսի վիշկաների քանակն այնքան չափ են, վոր հեռվից անտառի տպավորություն և թողնում: Քանի զնում վիշկաների թիվն ավելանում է վորովներու նորանոր հորեր են փորում: Եթե է, վորովներու նորանոր հորեր են փորում:



Նկ. 6. Նավթահորեր. Յերկրորդ նավթահորից շատրվան և լափում

նկարում ցույց ե տրված նավթահորերի վրա շինված վիշկաները:

Հորերի միջով գետնի տակ գտնված նավթը դուրս են հանում կամ ժելոնկաների (յերկար ու նեղ դույլեր են) միջոցով և կամ դուրս են քաշում ոդի ճնշման տակ (կոմպրեսոր յեղանակ):

Գետնի տակից դուրս հանած նավթն պորժածելու համար անպետք ե, վորովհետեւ իր մեջ պարունակում ե դյուրաբորբոք նյութեր, ջուր և ավաղ:

Այդ պատճառով նավթը դետնի տակից դուրս հանելուց հետո մի վարոշ ժամանակ պահում են հասուի ավտարանների մեջ և ասպա այդտեղից մղում են այն դրաբանները, վորտեղ նավթը յենթարկվում է մշակման. Նրանից սունում են— ընդլին, կերոսին, մազութ: Վերջինս առանձին մշակման յենթարկելով, բառանում են մեքենաների գանազան յուղն, վազելին և պարագին.

Ե՞նջուս և ԱՌԱՋԱՑԵԼ ՆԱՎՈՅ

Դաշտի ծագման վերաբերյալ կա յերկու յենթարություն: Մի յենթաղբության համաձայն, վոր առաջարկել ե ոռուս պատմական Մեծակեյելու. Նավթն առաջացել ե յերկրի կեղևի մեջ ջրի և յերկաթ-կարրիդի փոխաղղեցությամբ մեծ ճնշումների տակ: Այս յենթարությունը հաստատվում է փորձով, յերբ զերասքացրած գոլորչիով ազդում են սպիտակ չուլունի (բաղկացած և ածխածնից և յերկաթից), վրա, առաջանում են նավթի մեջ գտնվող նյութերի նման նյութեր (այսինքն՝ ածխաջրածիններ):

Յերկրորդ յենթարության համաձայն, վոր առաջարկել ե նեղինը, Նավթը կենդանական ծագում ունի: Նա առաջացել ե չափազանց հեռավոր անցյաններում, մեռած ծովային կենդանիներից: Սրանց դիակները թաղվել են Հողի խորքերը և այնտեղ բարձր բարեխառնության և մեծ ճնշումների ազդեցության տակ ժամանակի ընթացքում փոխարկվել են գանազան տեսակի

ածխաջրածինների, վորոնց խառնուրդը կազմում է նավթը (ածխաջրածինները— զբանք այնպիսի միացություններ են, վոր կազմված են ածխածնից և ջրածնից, այլպիսի ածխաջրածիններից ե կազմված նավթը):

Այս յենթաղբությունը նույնակեն հարտավում ե լաբորատորական յեղանակով մի քանի կենդանական ճարպերից, որինակ, ձևան յուղից թորման միջոցով մեծ ճնշման տակ նավթ է ստացվում:

Ա.Ա.ԵԼԱՆՑՈՒԹԵՐԻ ՊԱՇԱՐԸ

Վառելանյութերի մասին մեր ասելիքը վերջացնելուց առաջ, սկսոնենց նաև թե վառելանյութերի ինչպիսի պաշար կա զանազան յերկրներում և ԽՍՀՄ:

Կանգ առնենք նախ քարածխի վրա: Բոլոր տեսակի քարածխի պաշարը ամբողջ աշխարհում հաշվում է մոտ 7398 միլիարդ տոնն: Քարածխի պաշարը ըստ յերկրների բաշխված է այլպես.—

1.	Հյուսիսային Ամերիկայի	Միացյալ Նահանգներ
2.	Չինաստան	930
3.	Կանադա	800
4.	ԽՍՀՄ	394
5.	Գերմանիա	256
6.	Մեծ Բրիտանիա	190
7.	Լեհաստան	155
8.	Ֆրանսիա	30

Մասնագետների մոտավոր հաշիվներով քարածխի պաշտրի վերջանալու ժամկետները տարբերակիրեներում հետեւալ պատկերն ե ներկայացնեամ:—

1.	Կանակայում քարածիի պաշարը	վեր-
	Հանալու յի	265 տ. հ.
2.	Զինաստանում	529 տ. հ.
3.	ԽՍՀՄ	206 տ. հ.
4.	ՀԱՄ Նահանջներում	183 տ. հ.
5.	Լեհաստանում	162 տ. հ.
6.	Գերմանիայում	121 տ. հ.
7.	Մեծ Բրիտանիայում	102 տ. հ.
8.	Ֆրանսիայում	99 տ. հ.
9.	Բելգիայում	92 տ. հ.
10.	Աշխարհի	173 տ. հ.

Յեթե բարածիի պաշարը կրավակունացնի հայրուր տարիներ, նավթի պաշարը, բայ մոտավոր հաշիվների, կրավականացնի միայն մի քանի տասնյակ տարի: Այդ և պատճառը, վոր այսոր դիտնականները և քիմիկոները շատ լուրջ կերպով աշխատանք են տանում այն սոզությունը, թե ինչով կարելի կլինի փոխարինել նավթը:

Եսպթի պաշարի տեսակետից Խ. Միությունը առաջին և բանում ամբողջ աշխարհում:

Սուրեն բերած թվերը ցույց են տալիս նավթի պաշարը զանազան յեկերներում— միլիոն տոններով հաշված:

1.	ԽՍՀՄ	2874
2.	Հարավ. Ամերիկա	1230
3.	Հյուսիս. Ամերիկա	930
4.	Պարսկաստան և Միջազգայք	770
5.	Մեկսիկա	602
6.	Հնդկաստան	400
7.	Չինաստան	183
8.	Ճապոնիա և Ֆորմոնցա	165
9.	Կանադա	132
10.	Արժեք և Շեքիալառու	128

Նավթը ԽՍՀՄ պահպար հարասություններից մէկն է, վոր ոկտոբեր և շատ բնայողաբար ծախտենք, վոր պիսովի Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանջների վիճակում չմինենք: Այսուեղ վոր ավելի քիչ նավթի պաշարը ունեն, տարեկան 15 անգամ ավելի նավթ էն ծախտում քանի ԽՍՀՄ-ում:

Հաշիվները ցույց են տվել, վոր յեթե Ամերիկան շաբունակի այդ տեմպերով նավթի արտադրելը, նավթի պաշարը այնուեղ կրավարարի միայն 10-15 տարի:

Խորհրդային Միության նավթի պաշարն տպահովված է 65-75 տարի ՀՀացված 1929 թ. Աւրալում և Պերմյան նոհանգում հայտնաբերած նավթի նոր աղբյուրները, վորոնց պաշարը սակայն դեռ պարզված չէ):

Քարածիից և նավթից բացի մեզնում կտ տօրի և փայտ: Տորֆի համավարհային պաշարը հաշվում են մոտ 467 միլիոնդ տոնն, վորոց 364 միլիոնդ տոնն կամ 78 տոկոս ընկնում է Խ. Միության:

Փայտանյութի տեսակետից ԽՍՀՄ գարձյուլ բարեհաջատ պայմանների մէջ և գտնվում: Մասամբ հաշիվներով մեզնում փայտանյութի տորեկան աճումը կազմում է 687 միլիոն տոնն, վոր համարյեք և (այսինքն կարող և փայտարինել) մոտ 315 միլիոն տոնն լավ տեսակի քարածիի*) :

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր վառելանյութերի տեսակետից ԽՍՀՄ ուրիշ յերկրների համեմատությամբ, ամենաբարենպաստ պայմաններումն է գտնվում:

*) Բոլոր տեսակի նյութերն եւ, վորովես վառելանյութ, միտուեակ արժեք չեն ներկայացնում: Նյութեր կան, վորոնք արվելի թիւ, շատ տաքություն են արտադրում, նյութեր կան՝ քիչ: Սուրբ բերած ապյուսակը ցույց է տալիս զանազան վառելանյութերի չերմարտապրոդականության ընդունակությունը:

Յութիյա պլանով համատեսնված մեր յերկը արևոտեսության վերակառուցման տեմպերը վատերանդութերի հոկա ծախսում են պահանջում։ Այդ և պատճառը, վոր համայնքը նախառենք և վատերանդութերի արտադրանքի հետեւյալ աճումը, *)

Տորֆ—1913 թ. արտադրվել է 1,5 միլիոն տոնն։ 1927/28 տնտեսական տարում տորֆի արտադրանք հասել է 7,5 միլիոն տոննի, իսկ 1932/33 թ. պետք է հասնի վոչ պահան քան 22 միլիոն տոննի։

2. Քարածուխ—1913 թ. արտադրվել է 28,75 միլիոն տոնն։ 1927/28 արտադրանքը յեղել է 35,5 միլիոն տոնն։ Հնդամյակի վերջում պետք է լինի 75 միլիոն տոնն։

ԽՍՀՄ քարածուխ արտադրանքի բացարձակ աճումը հնդամյակի վերջում զերակշռում և կազիտալիքատական տռաջավոր յերկրների քարածուխի արտադրանքը։

1. Նավթ (մի կիլոդոս սավին այրվելիս տուիս է)	11,000	մեծ կազմիա
2. Մաղութ	9,500	»
3. Բենզին	9,700	»
4. Լուսաւու գազ	7,500	»
5. Քորածուխ	7,800	»
6. Կոզի	7,800	»
7. Փոյտածուխ	7,000	»
8. Ցորֆ	4,000	»
9. Թույտ	3,100	»

*) Ազատդ մենք բերել ենք միայն ասրից և քարածուխ մատին ավլաներ, իսկ մյուս վատերանդութերինը չի բերված՝ ձեռքի տակ ավլաներ չունենալու պատճառով։

1. ԽՍՀՄ քարածուխի արտադրանքի տեսանկանը և 40—45 միլ. տոնն	25—30	»
2. ՀԱՄԵՆ	10—12	»
3. Անգլիայի	20—25	»
4. Գերմանիայի	15—16	»

1929/30 թ. կոնսորչ թվերը վկայում են, վոր քարածուխ արտադրանքի համար ընթանում է 8-9 % չերտելուարտություն։

ՍՏՈՒԴԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Թվեր, թև ինչպես վառելանցութեր պահե։
2. Ի՞նչ նպատակների համար են դործադրում վառելանցութերը։
3. Ի՞նչ նյութերից են կազմված վառելանցութերը։
4. Ինչպես են պատրաստում վառյուծությը (համառոտակի նկարագրի)։
5. Ի՞նչպիս և ի՞նչից ե առաջացել տորֆը (նկորագրել կարձ ձևով)։
6. Ի՞նչպիս և ինչից և առաջացել քարածուխը (կարձ նկարագրություն)։
7. Թվեր քարածուխի չոր բարումից ստացվող գլուխությունը նյութերը։
8. Թվեր նավթաբեր վայրերը։
9. Նկարագրե՛ք, թև ինչպես են մշտկում նավթը և ի՞նչ են ստանաւ նրանից։
10. Տվեր կարձ նկարագրի նավթի ծավան մասն ոին։
11. Ի՞նչ տեղ և դրավում աշխարհում ԽՍՀՄ նավթի, քարածուխի և այլ վառելանցութերի ուսուկետից։

12. Քանի տարգա նավթի պաշար ունի չյուռ, Ամերիկայի Մխացյալ նահանդները և քանի տարգա պաշար ունի ԽՍՀՄ.

13. Տորֆի, քարածիփի, նավթի արտադրանքը չափը հնգամյակի վերջում վորքան և կազմում:

Վառելանյութերի տեսակների, նրանց նշանակության մասին խոսելուց հետո մենք ուսուց և ծանոթանք նաև վառելանյութերի կազմությանը, այրումից դոյացած նյութերին և այդ նյութերի մի քանի հատկություններին:

ԱՆՈՒԻՆ ՅԵՎ ԱՐԱ ՍՏԱՑՈՒՄՆ ԱՅՐՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Աշխատանք 2. Առանձին-առանձին փորձանոթներք մեջ տաքացրեք փայտի սղոցուկ, շաքար, ալյուր, փետուր, միս և տեսեր թե ի՞նչ փոփոխության են յենթարկում դրանք:


ԱՆՈՒԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանք 3. Փորձանոթի մեջն ածեաք քիչ բանուցքած փարածուխ, բայց առաջարեք ուղիբուժությի մրտ և ապա բերանը փակելով խցնող թավեք սատի: Առելուց հետո փարձանոթի մեջ, ածուխի վրա, քիչ կարմիր գիճի կամ գունավոր ջուր ածեաք, յուսացրեք և տուաքամեր: Ի՞նչ դույնի հեղուկ և սուայվում:

Աշխատանք 4. Կրկնեցեք Յ-րդ աշխատանքը, բայց գունավոր ջրի փոխարեն վերցրեք հոտ ունկցող ջուր (ըլորաջուր կամ ծծմբաջրածնային ջուր): Փորձից հետո յերբ քամեր ջուրը, հոտ քաշեք: Ի՞նչ փափոխության և յենթարկվել ձեր վերցրած հոտ ունկցող ջուրը: Ի՞նչ յեղակացություն կարող եք հանել Յ-րդ աշխատանքերից՝ ածուխի հատկութանների ժամկեն:

ԱՅՆԱՌԹԹՈՒ ԳԱԶ ԱՑԱԽԱԼԾ


Աշխատանք 5. Մի մեծ բանկա լցրեք թթվածնով (թե բնչովես պետք և այդ անել, զուք արդեն սովորել եք ուսաջին ասախագրության ժամանակ): և ապա յերկաթյան գդալի մեջ զնելով մի կտոր առկայծուլ փայտածուխ, մազրեք թթվածնով լցրած բանկայի մեջ (նկ. 7): Յերբ ածուխի այրումը բանկայի մեջ դադարի (ածուխի այրման ժամանակ բանկայի բերանը ծածկած պահպակ), հանեք դուալը ածուխի մնացորդի հետ և բանկա-



Նկ. 7. Ածուխի այրում թթվածնի մեջ

յի մեջ մազրեք վասկած մոմը (կամ լուցկին): Ի՞նչ է մնում վասկած մոմը: Այդ բանկայի մեջն ածեաք մի քիչ պարզ կրածուր և թափ ավելք: Ի՞նչ զույն և սուանում կրածուրը (կրածուր պատրաստելու համար պետք է վերցնեք հանուն կիր, զցեք ջրի մեջ և ապակե ձողով լավ խառնելով՝ թողեք հանգստանս և ապա վերամիջներից՝ պարզ մասը լցրեք մի ամանի մեջ և բերանը փակեցիք պարզ մասը լցրեք մի ամանի մեջ և բերանը փակեցիք իցանով և դա կմնի կրածուր):

Աշխատանք 6. Վերցրեք մի սրվակ, մեջը դցեք մի քանի կոտր կալին (կամ մարմար կամ կրաքար) և բերանը փակեք յերկու անցք ունեցաց խցանով, (նկ. 8): Խցանի մի անցքով սրվակի մեջ մացրեք յերկարապահոց մի ձագար այնպես, վոր նրա ծացքը համար սրվակի հառակին, իսկ մյուս անցքով անցկացրեք ազատ ին մի կոր խողովակ: Այս բոլովը պատրաստելուց հետագա ձագարի միջնի մեջն ածեք թույլ ազատթու: Ի՞նչ է բարձրանում կուլճից: Մոռեցրեք ձեր ու կանջը սրվակին. Ի՞նչ ձայն էք լուսմ: Կալճից բարձրացող զաղն ածխաթթու զաղն է: Կոր խողովակին միացրեք մի ուղինե խողովակ և մյուս ծացքը մացրեք մի դաստիք բանկայի մեջ: Քիչ հետա այլ բանկայի մեջ մացրեք մի վառվող մամ: Ի՞նչ է լինում վառվող մոմի ածխաթթու դաղի մեջ (նկ. 9):



Նկ. 9. Առմը հանդում և Նկ. 10. Կրաշուրը պատրաստման ածութթու զաղի մեջ լուսիթթու զաղի ածութթու տակ

Աշխատանք 7. Վերցրեք մի բանկա, լորեք ածխաթթու զարպով և չուռ ամեք մի առ նման բանկայի մեջ:

Քիչ հետո վառվող մոմը մտցրեք ն-րդ բանկայի մեջ: Ի՞նչ է լինում մոմը: Ի՞նչպես կրացատրենք այդ յերեւութեա:

Աշխատանք 8. Վերցրեք մի բաժակի մեջ կրաջուր (պարզ վիճակում) և նրա մեջ անցկացրեք ածխաթթու զարպ: Ի՞նչ է լինու կրաջուրը (նկ. 10):

Աշխատանք 9. Վերցրեք կես բաժակի չափ մաքուր ջուր և վրան ավելացրեք լակմուսի կապույտ լուծույթ: Ջուրը կկապաի: Հետո այդ ջրի մեջ անցկացրեք ածխաթթու զաղ: Բայց ական զաղ լուծելուց հետ տեսեք, թե ի՞նչ զույն և ստանում կապույտ լուծույթը: Փորտ ճեց ջրի համը. ի՞նչ համ ունի:

Աշխատանք 10. Լցրեք բանկան ածխաթթու զաղով և չուռ տղիք վառվող մոմի վրա: Ի՞նչ է լինում մոմը:

ՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Կենդանական և բուսական ծագումն ունեցող նյութերը վիճացնելիու ածխանում են, այսինքն զանում են ածութի (աշխ. 2): Այդ յերեւույթն ապացուցում է, վոր ածութին առաջանում է կենդանի նյութերից մենապանի նյութից և ուսաշանում նաև տորֆը, նավթը, փայտը: Եշանակում և վատելանյութերի (ընդհանրապես բոլոր որդանական նյութերի) գլխավոր բազազրիչ մասն ածութին է կամ ածխածինը:

Ածխածնից բացի, վատելանյութերի կաղմության մեջ մտնում են՝ թթվածին և ջրածին: (Այդ նյութերի ներկայությունը ևս պետք է դիտած լինիք, յեթե ուշադրությունը նայել եք, ամենք թի, այն փորձանութի պատերին, վորի մեջ չիկացնում էյթ վարոի սպոցուկը. այնտեղ զայտանում են ջրի կաթիներ (աշխ. 2), յեթե

չեք նկատել կրկնեք իրոքը։ Այս կաթիւների պայմանումն արդեն ապացուցում է, վոր փայտի մեջ կա թթվածքն և ջրածին, վորոնք և կազմում են ջուրը։

Յորդ և Հ-րդ աշխատանքները ապացուցում են, վոր ածուխն ընդունակ և կլանելու գույներ, համեր, հոռեր, թույներ։ Այդ և պատճառը, վոր ածուխն սպառագրծում են ուղղական զործում վորովես հակագույն⁴⁾ (թույնավոր գաղեր կլանելու համար), իսկ խողաղ արդյունաբերության մեջ, վորովես գույներ և համեր շեղուացնող նյութ—որինակ զործ են ածում շաքարի արդյունաբերության մեջ՝ հակնդեղի գեղին դույնը չեղուացնելու։ ողու և սպիրտի արդյունաբերության մեջ՝ զանազան խառնուրդներ մաքրելու։ Ածուխը զործածվում է իրեն քամիչ մեծ քանակությամբ ջուր մաքրելու համար։

ԱԾԽԱԾԻՆԸ ԲՆԱՒԹՑԱՆ ՄԵՋ

Ածխածինը բնության մեջ շատ տարածված նյութ է և հանգես և զալիս յերեք ալբանելություններով—քարածիի, գրաֆիոի և ալմաստի։

Քարածուխը զործ են ածում վարպես վառելու նյութ և արդյունաբերության այլ բնագավառներում՝ զանազան նպատակների համար։

ԳրաՓիտ—սև գույնի պինդ նյութ է։ Նույնպես բավական տարածված է։ Աս քարածիի հին տեսակն է։

*.) Հակագույնի մեջն ածում են վոչ թե սովորական ածուխ, այլ ակախացրած ածուխ։ Դա սովորական փայտածուխից են պատճառատում՝ յնթարկելով վորու մշակման, վորից հետո զառնում է ավելի զործույթա-ակտիվ, վոր համար ել կոչվում է ակտիվացրած ածուխ։

ԳրաՓիտն ուդում չի այրվում, այլ այրվում է ժաքուր թթվածնի մեջ բարձր ջերմաստիճանում։ Այս հասկության համար գրաՓիտից որաբաստում են անկիզելի անոթներ—վորոնց մեջ հալում են դժվարահալ մետաղներ։ ԳրաՓիտից են պատրաստում նաև մեր սովորական սև մատինները։

Ալմաստը—քիչ և տարածված բնության մեջ և գտնվում և գորգիկ կտորներով։ Մինչեւ հիմա գրնված ամենամեծ ալմաստը մի բունցքի չափ է։ Ալմաստը նույնպես այրվում և մաքուր թթվածնի մեջ բարձր ջերմաստիճանում, որում նույն չի այրվում։ Այսպիսին նըրանից ստացվում է միայն ածխաթթու գաղ և տակը վոչինչ չի մնում։ Այդ ցույց ե տալիս, վոր ալմաստը մաքուր ածխածին է, իսկ գրաՓիտը (ավելի քիչ) և քարածուխը (ավելի շատ) խառնուրդ են պարունակում։ Ալմաստը բնության մեջ յեղած նյութերից ամենակարծր նյութն է. զործ են ածում ապակի և այլ պինդ մարմիններ կտրելու և ծակելու ինչպես և զարդեր պատրաստելու համար։

Զնայած նրան, վոր ածուխը, գրաՓիտը և ալմաստը թե իրենց արագացին ահեցով և թե հատկություններով իրար նման չեն, բայց կազմությամբ նման են— նրանց յերեքի նյութն ել ածխածին է։ Այդ հանգամանքն ապացուցվում է նրանով, վոր

- 1) Քարածիից ձնշտան և բարձր ջերմության տակ ստացվում և ալմաստի փորգիկ կտորներ։
- 2) Ալմաստը 2000 տատիճան տուանց ողի փոխարկվում է գրաՓիտի։

3) Ածուխը, գրաՓիտը և ալմաստը մաքուր թթվածնի մեջ այրելիս ստացվում և ածխաթթու գաղ,

և ուրիշ վրձննչ, իսկ այդ գաղը բաղկացած է միայն ածխածնից և թթվածնից :

Ա. ԾԽԱՅԹԸՆԻ ԳԱԶ ՍՅԱԿԱՎԱՐ, ՀԱՏԿԱՅԹԸՈՒՆՆԵՐ
ՅԵՎ, ՈՒՏԱԳՐԸՈՒՄԸ

Երբ ածուխն այլպում և թթվածնի մեջ (կամ ոռում) վերջնին միանում և ածուխի նյութը կազմող ածխածնի հետ և առաջ և բերում ածխաթթու գազ (աշխ. 5): Ածխաթթու գազ և գոյանում բոլոր գառերանյութերի այլումների ժամանակ, մարդու, կենդանիների և բույսերի արտաշնչման ժամանակ: Այդ գազը գոյանում և նաև նեխումների ու փթումների ընթացքում, գործ և դադիս յերկրի խորքերից (գլխակորապես հրաբխային վայրում) և արգածվում և որի մեջ: Ազատ վիճակում ածխաթթվի քանակությունն ալում չառ քիչ և՝ 0,03% և այդ քանակությունը համարյա չի ավելանում, չնայած վոր միշտ արտակըրգում և մեծ քանակությամբ: Ինչո՞ւ: Ահա թե ինչու:

Կանաչ բույսերն ողում գոյացած ածխաթթու գաղը յուրացնում են այսինքն վերցնում են, վարպես սնումող:

Այդ պրոցեսը կատարվում է այսպես. բույսերը ցերեկն արևի լույսի տակ տերևների միջոցով որից վերցնում են ածխաթթու գաղը և ըլորոֆիլի հատիկների մեջ տարրալուծում են ածխածնի և թթվածնի:

$$\boxed{\text{Ածխածնի}} + \boxed{\text{թթվածնի}} = \boxed{\text{Ածխաթթու}} + \boxed{\text{Թթվածնի}}$$

Ածխաթթու գաղ

Թթվածնիը բաց են թողնում ողը, իսկ ածխածնիը պահպան են իրենց մեջ և զործ են ածուխ իրենց մարմնի

կառուցման համար: Այսպիսով բույսերը մաքրում են ողը ածխաթթու գաղից:

Լաբորատորիաներում ածխաթթու գաղն առանում են կրաքարից, մարմարից կամ կավճից՝ նրանց վրա աղղելով աղաթթու (կամ ծծմբական թթու): Հիշեք երդ աշխատանքը:

Ածխաթթուն անդույն, անհոտ գաղ է. 1/2 անգամ ծանր և ողից. նրան կարելի յե մի ամանից չուռ տար մի ուրիշ աման, ինչպես ջուրը (աշխ. 7): Այդ գաղը չի այրվում և վոչ ել նապաստում և այրման: Վառվող մարմինները սրա մեջ հանդչում են (աշխ. 6), իսկ կենդանիները ինեղղվում: Ածխաթթու գաղի մեջ չարունակում են վառել մագնիումը և կալիումը: Ածխաթթը թու գաղը կրածուրը պղպտրում է, զրա համար ել այդ գաղի ներկայությունը միշտ փորոշում է կրածը բով:

Ածխաթթու գաղն ողտակործում են հրդեհներ հանդցնելու համար,*) առդա պատրաստելու դործում և արհեստական կերպով հանքային ջրեր և այլ փրփրող.

*) Ածխաթթու գաղով հրդեհներ հանդցնելու համար գործու-

կանում ողտվում են հրչեներով (առեւտութեած այդպիսի հըս շենք տեսած կլինեք հիմնարկությունների, կլինոների, թատրոնների, ակումբների պատերին կտաված), վորոնք և բուժակում են ածխաթթվի աղի լուծույթ (կրաքարի, կավճի, մայ տարի, սուզայի): եղորկն թթու (աղաթթու կամ ծծմբական) առանձին փոկ անոթում: Հրչեջը ցնցելու կամ շրջելու զեպօւմ թիվով լորած անոթը կոտրվում է, թթուն թափվում աղի լուծույթի վրա, կատարվում և ուսակցիա և արտադրվում և ածխաթթու շալ. (Ծիչա այնպես, ինչպես գուք տեսաց Յ-ը աշխ. ժամանակ):

Գաղի ճնշումից աղի լուծույթը, թթվի հետ խառը, բաժն հոսանքով դուրս և մղցում հրչեջից, չեղուկից որտակրող ածխաթթու գաղը մարում և հրդեհը:

խմիչքներ պատրաստման դործում։ Ճնշման տակ այդ գաղը հեշտությամբ լուծվում է ջրի մեջ և ջուրն հառնելի թթվաշ համ և սունում։ Փրփռող խմիչքները—գարեջուր, կվաս, լիմոնադ և այլն, իրենց մեջ ածխաթթու զաղ են պարունակում։ և յերբ ինչանը հանում են շահ բրանից, այսինքն հեռացնում են հեղումը, գաղը հեռանում է և առաջ բերում փրփռը։

ԱԾԽԱՅԻՆ ՈՒՍՏԻԴ (ՈՒԳԱՐԻ Գ.Ա.Զ.)

Եերբ վառելանյութի (ածուխ, վայտ և այլն) այրումն աեղի ին ունենում ողի ուժեղ հոսանքի ժամանակ, դոյջանումն ածխաթթու զաղ կամ ածխածին դիսք սիդ (այսինքն կրկնակի ոքսիդ. օրանց մասին կուլուրներ հետո), իսկ յեր վառելանյութերն այրվում են ողի թույլ հոսանքի տակ՝ առաջ և զալիս թունավոր մի դաղ, վորը կոչվում է ածխածին ոքսիդ կամ շմոլ։ Ածխածին ոքսիդը հաճախ դոյջանում է և աներում ձմեռ ժամանակ, յերբ վառարանի մեջ յեղած վառելանյութը դեռ լրիվ չայրված փակում են վառարանը, այդ ժամանակ ողի հոսանքը պակասում է, դոյջանում և շմոլ և տարածվում սենյակի մեջ։ Սենյակում քնած/մարդիկ ներչնում են այդ գաղը, թունավորվում և հաճախ մեռնում։ Այդ յերեսույթին սովորական խոսակցության մեջ ասում են ուզար յեղավ, դրա համար ել այդ գաղը կոչվում են նաև ուզար դաղ։ ժամանակ

Մարդիկ ուզար են լինում և հարթուկելիս և հեշտայենից, յերբ նրանց մեջ յեղած ածուխը լրիվ չայրված ներս են տանում։ Ուզարի նամնը դմացավն ե։ Ուզարի ժամանակ պետք են անմիջապես դուրս գալ բաց ողի մեջ։

Ածխածին ոքսիդն, առացինք, կոյանում է, յերբ ոյցումը լրիվ չի կատարվում, հետևապես այդ դառնությամբ վիճակումն ե դունվում և ընդունակ և այրվելու։ Այրվելիս ածխածին ոքսիդը միանում է դարձյալ թթվածնի հետ և տալիս ե ածխածին դիոքսիդ, վորը կարելի յե պատկերացնել այսպես

$$\boxed{\begin{array}{c} \text{Ա.ծ ի ա ծ ի ն} \\ \text{թ թ վ ո ծ ի ն} \end{array}} + \boxed{\begin{array}{c} \text{թ թ վ ա ծ ի ն} \end{array}} = \boxed{\begin{array}{c} \text{Ա.ծ ի ա ծ ի ն} \\ \text{թ թ վ ա ծ ի ն} \end{array}}$$

Ա.ծ ի ա ծ ի ն
ոքսիդ

Ա.ծ ի ա ծ ի ն
(Կրկնակնառողիդ)

Ածխածին ոքսիդը մաքուր թթվածնի մեջն այրվելիս ժինչի 1400 աստ. տաքություն և տալիս ե դրա համար դործ են ածում տեխնիկայում վորսկո վառելանյութ՝ մետաղներ հալելու համար։

ԳԱԶԱԳԱՅՆԻՐԱՑՈՐՆԵՐ

Մեծ քանակությամբ ածխածին ոքսիդ ստանալու համար տեխնիկայում գործ են ածում առանձին վառարաններ, վորոնք կոչվում են գեներատորներ։

Գեներատորների մեջ ածում են կոկսի հաստ շերտ, վառում և տակեց ող են փչում։ Կոկսն այրվում է և առաջ ե զալիս ածխաթթու զաղ կամ ածխածին և առաջ ե զալիս ածխաթթու զաղ կամ ածխածին դիոքսիդ։ Եերբ կոկսը վերին շերտում ուժեղ կերպով չի բարձրանում ե, ուր չկա ողի ավելցուկ, տեղի յե ունենում ածխածին ոքսիդի առաջացում։ Ստացված այդ գաղը խողովակի միջով տեղափոխում են առանձին վառարանի մեջ, վորտեղ և այրում են։

Եերբ գեներատորի մեջ չկացած կոկսի վրայով ոգի փոխարեն ջրային գուրություններ են փչում, այն ժամանակ ջրի գուրը և ածուխի մեջ ուեակցիա յե կա-

առարկան և առաջանում եւ ածխածին ոքսիդ և ազատ ֆրածին: Կազմակերպությունը կոչվում է «Ջրային ջաղաք» Ջրային ջաղաք ավելի շատ ջնրմաւթյուն և տառընք, (մինչև 2000^o) քան գեներատորի դաշը: Ջրային ջաղաքը բոցը գործադրում են ապահով հալիլու և ամաներ և մալիլու համար:

Դենեսատորի և Ջրային դաշերից բացի, սպառությունում են, վորում վառելիք, նաև այդ գտղերի խառնուրդը, վորը կոչվում է «Խոռը գազ»: Այս դաշը ստանալու համար գեներատորի մեջ ողի հետ միաժամանակ մղում են և Ջրային գործախների այնպիսի քանակություն, վոր չիկացած կոկսի ջերմաստիճանը շատ չինչնի և ուստիշիան չը դարձարի: Խառը դաշը ավելի ջերմություն և առաջնում, քան գեներատորի և ջրային դաշերը:

Ինչպէս տեսնում եք քնական վառելանյութերից բացի (փայտ, նավթ, քարածուխ, տորֆ, բնողին), տեխնիկական մեծ գործածություն ունեն, այսպես սամած, դաշային վառելանյութերը:

Այն գտարանները, վորտեղ դաշեր են ստանում այլուրու համար, կոչվում են գաղաղեներատորներ:

Վառելանյութերի մասին մենք այսուղ խոսեցինք շատ համառոտակի: Այդ խնդիրն այնքան անհրաժեշտ և այնքան բարդ խնդիր ե, վոր նրան նվիրված են մեծ քանակությամբ գիտական գրքեր: Բայցի այդ վառելանյութերի խնդրով ամեն տարի զանազան գիտական հետազոտություններ են կատարվում:

Մոռկայում՝ Փողովրդական Ծնտեսական Գերագույն Խորհրդին կից հատուկ հիմնարկ կա, վոր հատկապես վառելանյութերի խնդիրներով և գրադվում:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Քա՞նի այլաձեռնությամբ եւ լինում ածխածինը քնության մեջ և վորոնք են:

2. Ի՞նչպէս են ապացուցել, վոր գրաֆիտը, ուշմաստը և ածուխը միևնույն նյութից են:

3. Ի՞նչ նյութերից եւ ստացվում ածխածինը:

4. Նկարագրեք ածուխի հատկությունները:

5. Ի՞նչիք համար են սպառագործում ածուխը, գրաֆիտը և ալմաստը:

6. Ի՞նչպէս և յերբ և գոյանում ածխաթթու դաշը բնության մեջ:

7. Քա՞նի տոկոսն է կաղմում ողում յեղած ածխաթթու դաշը:

8. Ինչպէս այդ գազի քանակությունն ողում չի ավելանում:

9. Ինչպէս կարելի յե ստանալ ածխաթթու դաշը լաբորատորիաներում:

10. Թվեք ածխաթթու դաշը հատկությունները և նշեք թե ինչի՞ համար են սպառագործում այդ գազը:

11. Ինչպէս են վորոշում ածխաթթու դաշի ներկայությունը:

12. Ի՞նչ ելեմենտներից ե կաղմված ածխաթթու դաշը:

13. Ի՞նչ գեղքումն է գոյանում ածխածին ոքսիդ (ուղարի դաշ):

14. Ինչո՞վ ե տարրերվում ածխաթթու դաշն՝ ածխածին ոքսիդից:

15. Թվեք ածխածին ոքսիդի հատկությունները:

16. Վորտեղ են սպառագործում ածխածին ոքսի-

Այրում ասելով մենք սովոր ենք հասկանալ անպայման բոցի կամ կրակի առաջացում, բայց իրականում այդ արդակես չէ: Այրման բաղմաթիվ ուեակցիաներ կան, վորոնք բոց կամ կրակ չեն առաջանում: Որինակ, վայտի ածխանալը՝ չոր թորման ժամանակ, զբի մեջ, զետնի տակ: Մետաղների ոքսիդացումն ողում: Նյութերի փթումն և նեխումն: որպանիզմների մեջ տեղի ունեցող հյուավածքային նյութերի քայլացումը և այլն: Այս բոլորն այրման որինակներ են, վորի ժամանակ կրակ կամ բոց չի առաջանում:

Իիմիայի լեզվով այրում ասելով պետք եւ հասկանալ նյութի միացումը թթվածնի հետ. այրումն առաջ եւ բերում ոքսիդներ:

Այրումը, վոր կատարվում եւ ողում կամ մաքուր թթվածնի մեջ, դա թթվածնի և նյութի միացման մասնակի դեպքեր են:

Թթվածնի հետ միացման ռեակցիան կամ ոքսիդացման յերեւութը կարող եւ տեղի՝ ունենալ դանդաղ կերպով—առանց բոցի: Սակայն այրման ժամանակ, լինի դա բոցով կամ առանց բոցի, միշտ արտադրվում եւ ջերմություն. արտադրված այդ ջերմությունը հաճախ նկատելի չի լինում, վորովհետև այն ժամանակ արտադրված ջերմությունը ջրջապատի ողին տալու հնարավորությունը դժվարանում եւ, այդ դեպքում ջերմությունը կուտակվելով՝ առաջ եւ գալիք լինարացավառում:

Ինընարացավառման դեպքեր հաճախ են պատահում առորյա կյանքում: Որինակ, յերբ խոտը լավ չչորա-

ցրած և խոնավ վիճակում դարսում են իրար վրա, ու ռաջ եւ գալիս փթում, նեխում, այսինքն՝ դանդաղ կերպով այրում եւ կատարվում և առաջացած ջերմությունը կուտակվելով՝ տեղի յեւ ունենում խոտի դեղի ինքնարունկում: Նման դեպքեր տեղի յեն ունենում և գոմարդի կույտի և քարածխի փոքրիկ կտորների կույտի մեջ:

Լինում են և դեպքեր, վոր նյութը չատ յեռանդով եւ միանում թթվածնի հետ և տեղի յեւ ունենում ինքնարոցավառում: Այդպիսի նյութ և ֆուֆորը, վորի հետ կծանաթանակ հետագայում:

Այսպիսով, այրում ասելով, պետք և հասկանալ թթվածնի միացությունը նյութի հետ, վոր կտրող եւ ընթանալ բոցով կամ առանց բոցի՝ դանդաղ կերպով, սակայն յերկու գնագրումն ել արտադրվում եւ ջերմություն:

Այրման ժամանակ գոյանում եւ ոքսիդ: Ոքսիդը կարող եւ լինել դաղային վիճակում (որինակ՝ ածխածին ոքսիդ, ածխածին դիոքսիդ), կարող եւ լինել պինդ վիճակում (որինակ՝ յերկաթոքսիդ, սնդիկոքսիդ) և կարող եւ լինել հեղուկ վիճակում (որինակ՝ ջրածին ոքսիդ, կամ ջուր):

Այս որենքից կան և բացառություններ, վոր դանդաղ այրման ժամանակ վոչ թե ոքսիդ եւ գոյանում, այլ ուրիշ բարդ նյութեր:

Մենք արդեն իմացանք, վոր այրումը տեղի յեւ ունենում բոցով և անրոց: Այժմ մոտիկից ծանոթանանք մոմի բոցի հետ:

ՄՈՒԻ ԱՅՐՈՒՄԸ ՅԵՎ ԱՅՐՈՒՄԻՑ ԳՈՅԱՅԱՌ
ՆՅՈՒԹԵՐԸ

Աշխատեմ 11: Վառեք մոմը (պես և վերցնել հաստ կարտոֆիլի մոմ) և նրա բոցի վրա պահեք սառը վիճակում և չոր պատերով մի բաժակ: Ի՞նչ եք նկատում բաժակի ներսի մակերելվութիւնի վրա:

Աշխատանք 12: Վերջրեք մի բանկա և նրա մեջն ածեք քիչ քանակությամբ պարզ կրաջուր: Հետո մոմի մի կտոր ամբացրեք յիրկանալարի վրա, վառեք և վառված վիճակում մտցրեք բանկայի մեջ, Յերբ մո-



Նկ. 11. Մոմի բոցը.
ա. բ և դ. նրա շերտերը

Ծը հանդէի, Հանեք բանկայից և վերջինիս բերանը կը ցանելով, լավ թափ տվեք: Ի՞նչ գույն և ստանում կրանուրը: Ուրեմն, ի՞նչ գազ և առաջացել մոմի այրութիւն:

Ի՞նչ յեղակացություն կարող եք անել և 12 աշխատանքներից՝ մոմի նյութի կազմության մասին:

Աշխատանք 13: Հախճապակյա թասի (կամ ուրիշ ամանի) մեջ հալեք մոմը և փորձեք հալված մոմը վառել լուցկով: Հալված մոմը վառվում ե:

Ոիցե բաղկացած նրա բոցը և նկարեք բցի մասերը:

Աշխատանք 14 Վառեք մոմը և տեսեք թե քանի չեր- (նկար 11):

Աշխատանք 15: Մտցրեք ապակյա կոր խողովակի մի ծայրը մոմի բոցի ներքին մութ մասը և վառեք խոռովակի մյուս ծայրից դուրս յեկող դադերը (նկ. 12):

Աշխատանք 16: Չայրված լոցկու գլուխը արտակերպով մտցրեք մոմի բոցի ներքինի մութ մասը (նկար 11-ա) և տեսեք թե քանի վարկյանից հետո յել լուցկին բոնկվում (հետեւեք ժամացույցով, վոր ունի վայրկյաններ ցույց տվող սլաք):


Նույն ձեռք լուցկու գլուխը մտցրեք մոմի բոցի մյուս մասերը (նկ. 11—բ և գ) իմացեք թե լուցկին բոցի վո՞ր մասում և ավելի շուտ բռնկվում: Ուրեմն բոցի վո՞ր մասն և ավելի տաք:

ԵՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանք 17: Վերցրեք մի սառն ապակի և վրան փշեք: Ի՞նչ եք նկատում ապակու վրա:

Աշխատանք 18: Բաժակի մեջն ածեք մի քիչ պարզ կրաջուր և խողովակով փշեք կրաջրի մեջ: Ի՞նչ դույն և ստանում կրաջուրը: Ուրեմն ինչ գազ են

աղոթաշնչում մարդիկի; ի՞նչ համեմատություն կարող եք անել մոմի այրման և շնչառության նկատմամբ, նկատի ունենա-



Նկ. 19. Մոմի բոցի ներքին մասը պատճենակում և իր մաշակող գոլուխները
Նկ. 20. Կրտջրի պատճենակում և իր մաշակող գոլուխները
լոլ այդ յերկու պրոցեսներից դոյցած նյութերը (աշխ. 11,12):

ՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ.

ՄՈՄԻ ԱՅՐՈՒՄԸ ՅԵՎ ԱՅՐՈՒՄԻՑ ՍՏԱՑԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ.

Յերբ այրվող մոմի բոցի վրա պահում ենք չոր պատճենակում մի բաժակ, տեսնում ենք, վոր բաժակի պատերին նստում են չըրի կաթիլներ։ Մենք արդեն գիտենք, վոր ջուրը գոյանում և ջրածնի և թթվածնի միացումից։ Նշանակում ե մոմն իր մեջ պարունակում և ջրածնին, վորն այրվելիս միանում ե ողի թթվածնի հետ և կաղմում է ջուրը (աշխ. 11)։ Յերբ մոմը վառում ենք բանկայի մեջ, վորտեղ կրաջուր կա և վառվելուց հետո բանկան թափ ենք տալիս, այսինքն՝ մոմի այրում մից դոյցած գաղը լուծում ենք կրաջրի մեջ, տեսնում ենք, վոր կրաջուրը կաթի գույն և ստանում (աշխ. 12), պղտորվում ե: Խոկ մենք արդին զիտենք, վոր կրաջուրը պղտորվում և ածխաթթու գաղի աղղեցության տակ։ Ուրեմն մոմի այրվելուց գոյացել ե ածխաթթու գաղ։ Սծխաթթու գաղը կաղմված ե ածխածնից և թթվածնից։ Նշանակում ե մոմի նյութի մեջ կա ածխածնին, վորը միանալով ողի թթվածնի հետ՝ առաջ ե բ'րում ածխաթթու գաղ։

Այս փորձերից պարզվում է, վոր մոմի նյութը բաղկացած ե ջրածնից և ածխածնից։ Կա և քիչ քանակությամբ թթվածնին։

Մոմի բոցը դիտելիս, նրա վրա յերեք մաս գեղ տեսնեամ։

ա) ներքեվի մաս (կամ կոն)՝ մուգ գույնի. բոցի
այս մասը բաղկացած է գաղերից, վորոնց զուրս բե-
րելով բոցից խողովակի միջով, կարելի յև վառել (աշ-
խատանք 15):

բ) Նրան մը ձապատող մաս (կամ կոն)՝ պարզ լու-
սավորվող դեղին դույնի բոցով:

գ) Դրան մասը (կամ կոն)՝ ավելի բաց գույնի բո-
ցով:

Կատարծ 16-րդ աշխատանքից դուք տհամք, վոր
լուցկու գլուխը բոնկվում է ավելի շուտ դրսի բոցի
մեջ և ավելի ուշ ներքելի բոցի մեջ—նշանակում է դրսի
բոցն ավելի ջերմություն և արտադրում, քան ներսի
կոնը և դա հառկանալի յէ, վորովհետեւ բոցի դրսի
մասն անմիջական շփման մեջ և ողի թթվածնի հետ,
իսկ ներսինը՝ վոչ:

Հաղված մոմը, ինչպես վորձից տեսաք (աշխ. 13),
չի այրվում, այլ այրվում է, յերբ դազ և դասնում:
Հալված մոմը պատրույդի միջն բարձրանում է վեր,
այնուղ տաքության ազդեցություն տակ դառնում է
դազ և ապա այրվում: Դրանով և բացատրվում այն
հանգամանքը, վոր մոմը վառելիս նա անմիջապես չի
վառվում, այլ՝ քիչ հետո, յերբ պատրույդի մեջ յեղած
մոմի մի մասը տաքանալուց դազի յև փոխարկվում,
վորից հետո վառվում է:

ԾՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Երբ համեմատում ենք շնչառությունից և մոմի
այրումից գոյացած արդյունքները, տեսնում ենք, վոր
նույնին են: Շնչառության ժամանակ գոյանում է ջուր
և ածխաթթու գազ. նույն բանն է գոյանում և մոմի
այրումից:

Այս փառառը առկացուցում է, վոր յերկու գեղազում
ել այրում և կատարվում. առաջին դեպքում (մոմի այր-
վելը) այրումն ընթանում է բոցով, իսկ յերկորդ դեպ-
քում (շնչառության ժամանակ) այրումը դանդաղ ե
կատարվում և առանց բոցի: Բացի այդ շնչառությու-
նից գոյացած գազը և ածխաթթու գազը հատապում
են, վոր մնը մարմնի մեջ կա ածխածին և ջրածին:
Ներշնչման ժամանակ, յերբ ներս ե գնում թթվածինը,
նա միանում և մեր մարմնի մեջ յեղած ածխածնի հետ,
այրինքն՝ այրում և կատարվում և գոյանում ե ածխա-
ծին դիոքսիդ կամ ածխաթթու գազ, վորը հնոանում է
մարմնից արտաշնչման ժամանակ:

Մարդու, ինչպես և յուս կենդանիների, մարմնի
մեջ կատարվող այրումն ապացուցվում է նաև նրանով,
վոր մեր մարմինը բավականին բարձր ջերմաստիճան
ունի՝ 36,5—37 աստիճան, իսկ ջերմությունը գոյանում
և այրումից:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ պետք ե հասկանալ այրում ասելով:
2. Թվե՛ք ընդհանրապես այրման մի քա...ի որինակը
ներ:
3. Քա՞նի տեսակ այրում կա և ի՞նչ և ոքտադըր
վում այրման ժամանակ:
4. Ի՞նչ ե դոյանում այրման հետեւանքով:
5. Ի՞նչ վիճակում են լինում ոչսիդները:
6. Ի՞նչ բան ե ինքնարտցալառումը և յերբ և այն
տեղի ունենում:
7. Ինքնարտցալառումը ի՞նչ նյութեր գիւեց:
8. Ի՞նչպիսի նյութեր են գոյանում մոմի այրու-
մից:

9. Ի՞նչպես ապացուցել, վոր մոմի այլումից դո-
յանում հն՝ ածխաթթու գաղ և ջուր:
10. Ի՞նչ նյութերից ե բաղկացած, մոմի նյութը:
11. Ի՞նչ մասերից ե կաղմած մոմի բոցը:
12. Մոմի բոցի վո՞ր մասն ե ավելի տաք և ինչո՞ւ:
13. Ի՞նչ դեր ե կատարում պատրույզը մոմի այրվե-
լու ժամանակ:
14. Ի՞նչ նմանություն եք գոտում մոմի այրման և
մարդու արտաշնչման մեջ:
15. Ի՞նչով եք ապացուցում, վոր մարդու մեջ ևս
այրում ե կատարվում:

2013

<<Ազգային գրադարան



NL0068134

505.